

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Կարոլոս Շելտըն — Քրիստոնէութեան գաղափարա-
կանը. Հետեիլ Յիսուսի. Թարգմ. Վ. Յ. Յակոբեան. Կ.
Պօլիս, 1903 թ., 16⁰ 241 էր.

Նորագոյն ժամանակի քրիստոնէական վիպագրու-
թեան գեղեցիկ նմուշներից մէկն է այս գիրքը: Մինչ
մեզանում հակակրօնական ուղղութիւններն ու հայեացք-
ները կատարեալ տիրապետութեան մէջ են և կրօնական
լինել համազօր է համարում յետադիմութեան և տգի-
տութեան, եւրոպայում և Ամերիկայում առաջնորդող
տաղանդները՝ յատկապէս գեղեցիկ գրականութեան ներ-
կայացուցիչները, քրիստոնէական գաղափարների մէջ են
աւանում իրենց տաղանդի և բարձրագոյն ձգտումների
արտայայտութեան տարրերը: Ով մարդկային հոգու ներ-
քին խորաններն է կամենում թափանցել և կեանքը կեն-
դանական աճեցողութիւնից աւելի մի բարձր երևոյթ
ըմբռնում, չի կարող կրօնական խնդիրներով չզբաղուել.
մարդկային հոգու տենչանքների, իղձերի և ձգտումների
ուղին միշտ ընթացակից է կամ աւելի ճիշդ նշանում է
կրօնի հետ. Գեթեի նման առաջնակարգ մի բանաստեղծ,
Վագների նման մի երաժիշտ իրենց հոգու բարձր թռիչք-
ներով ի վերջոյ կրօնականի եթերներն են բարձրանում:

Մի քանի տասնեակ տարիներ առաջ եւրոպայում
նիւթապաշտական հայեացքը կատարելապէս իշխող էր
մտքերի վերայ, ինչպէս այժմ մեր մէջ: Բայց նա սնանկ
դուրս եկաւ կեանքին աւելի լաւ ուղղութիւն տալու, նա
սնանկ դուրս եկաւ նաեւ գիտութեան առաջ: Դուրս հե-
տեանքն էր, որ քաղաքակրթութեան ներկայացուցիչ ազ-
գերի բարձր հագինների մէջ սկսուեց կրօնական մի նոր և
վսեմ շարժում, որ արտայայտում է գեղարուեստի բոլոր
ճիւղերի, ինչպէս և գեղեցիկ գրականութեան մէջ: Գեր-
մանացիների, Անգլիացիների և Միացեալ Նահանգների

դեղեցիկ գրականութեան մէջ աննշան տեղ չեն բռնում այն բանաստեղծներն ու վիպագրները, որոնք իրենց ստեղծագործութիւնների նիւթը քրիստոնէական գաղափարներն են ընտրում: Գերմանիայում Ֆրենսէնն այժմ առաջնակարգ վիպասանն է և նորա վէպերի բոլոր նիւթերը, այսպէս կամ այնպէս, կապուած են կրօնական խնդիրների հետ:

Մեր մէջ դեռ վաղ է այդպիսի ինքնուրոյն գրականութիւն սպասել, քանի մտքերի շփոթութիւնն է իշխում կրօնի վերաբերութեամբ: Բայց ուրախալի է գտնէ, որ հեռզհեռէ օտար գրականութեան աչքի ընկնող երեւոյթները թարգմանուում և հասարակութեան առաջ են դրուում: Լեհացի Սենկեիշի Quo vadis-ը—Յո երթաւ, Անգլիացի Փարրարի «Քրիստոնէութեան տրշալութիւն», Գերմանացի Էքերտի «Մարդ եմ» ևն, արդէն թարգմտուած են հայերէն: Պատուելի Յակոբեանն էլ Տաճկահայոց համար թարգմանել և հրատարակել է Ամերիկացի Շելտընի վերոյիշեալ գիրքը, որ հարիւր հազարներով տարածուած է Ամերիկայում և Անգլիայում և բազմաթիւ հրատարակութիւններ ունի:

Հեղինակը թէև քրիստոնէութեան գաղափարականն է կամենում ներկայացնել, բայց այդ վերացական և երեւակայական պատկեր չէ, այլ շատ դժեւով վերցրած նոր ժամանակի կենդանի քրիստոնեաների շրջանից: Սովորաբար եւրոպական ազգերի քրիստոնէութեան մասին գաղափար են կազմում փողոցից և արտաքին կեանքից, սակայն կան շրջաններ, ընկերութիւններ, հաստատութիւններ, ուր քրիստոնէութիւնը խօսք չէ, այլ կեանք և գործ: Ընդհանրապէս ճշմարիտ կրօնական կեանքը բարձրագոյն կեանքն է մարդկային հոգու համար, ուստի և որոշ անհատներ և շրջաններ միայն ընդունաւ են այդպիսի մաքուր անձնուէր և գաղափարական կեանքով ապրելու: Շելտըն մեր առաջ պատկերացնում է այդպիսի մի շրջանի գործունէութիւնը յանուն քրիստոնէական սիրոյ և եղբայրութեան, որ իւր նիւթական, մտաւոր և բարոյական կա-

բողութիւնները գործադրում է մերձաւորի փրկութեան համար: Մեր առաջ հետզհետէ նկարագրւում են մեծ քաղաքներին յատուկ ապականութիւններն ու անբարոյ յական ճահիճները, ուր խեղդւում են և անյետանում հարիւրաւոր, հազարաւոր մարդիկ: Եւ ահա Քրիստոսի շաւղով ընթացողների մի խումբ սկսում է իւր օրհնութեամբ լի գործունէութիւնը այդ շրջաններում: Քարոզիչ քահանան, եպիսկոպոսը, տաղանդաւոր երգչուհին, հարուստ վաճառականը, դպրոցի տեսուչը, լրագրագետը ևն. «Քրիստոսին հետեւիլ» նշանաբանով վերածնուած՝ սիրոյ, կարեկցութեան և գթութեան գործունէութիւն են սկսում ազգատութեան զոհերի և բարոյապէս անկեալների մէջ: Գրքի ընթերցանութեան հետ մարդու հոգին բարձրանում է դէպի գաղափարականը, անձնուիրութեան զգացմունքների աշխարհը, որ լաւագոյն ապացոյցն է հեղինակի յաջողութեան:

Աւելորդ ենք համարում բովանդակութեան մանրամասնութիւններ տալ, որովհետեւ նոյն գրքի մի տարբեր խմբագրութիւնը ուստերէնից թարգմանեց մեր միաբանակից Տ. Մամբրէ վարդապետ, որ և հետզհետէ տպագրուեցաւ «Արարատ»-ի մէջ «Քրիստոսի հետքով» վերնագրով: Վերջին գլուխը տպագրուեց ներկայ համարում: Յանկալի էր առանձին հրատարակուած տեսնել այս գիրքը Ռուսահայոց համար, որովհետեւ համոզուած ենք, թէ հայ ընթերցող հասարակութեան սիրելի գրքերից մէկը կլինի այն:

Դ. Վ. Յովսէփեան

Դասաւեճ՝ կրօնի. Ա. սարի. կազմեց Սահակ ա. ֆահ. Սահակեանց. ԺԱ. 84. Թիֆլիզ, 1907, գինն է 25 կ.

Սահակ քահանան առաջինն է մեր կրօնուսոյցների մէջ, որ աշխատել է մանկավարժութեան պահանջների համեմատ կրօնի դասագրքեր պատրաստել: Այդ է պատ-